Լավութիւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

§ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ¦

BAREGORTS սեպտեմբեր 2017, 3 (36), БАРЕГОРЦ

ՇՈՒՇԻՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՍՄՈՒՆՔԻ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

Փառատոնի մասնակիցները ոչ լրիվ կազմով. լուսանկար՝ հրաժեշտից առաջ

Դպրոցականների համար ամառային արձակուրդներին ամենահետաքրքիր միջոցառումներից մեկը համահայկական մանկապատանեկան ասմունքի փառատոնն է, որն արդեն 6-րդ անգամ ամեն տարի կազմակերպվում է Արցախի մշակութային մայրաքաղաք Շուշիում:

Պատկերացրեք՝ Պարսկաստանից, Լիբանանից, Ռուսաստանից, Վրաստանից (հիմնականում՝ Ջավախքից), Երևան, Ստեփանակերտ և Շուշի քաղաքներից, Արցախի հինգ շրջաններից Շուշիում հավաքված շուրջ հայ 100 երեխա տարիքային երկու խմբերով՝ մինչև 14 տարեկան և 15-ից բարձր՝ մինչև 17 տարեկան, Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցի դահլիճում մրցում են, իսկ գնահատող անաչառ հանձնախմբում Երևանի պետական համալսարանից գրականագետներ՝ բանասիրության դոկտորներ, պրոֆեսորներ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչներ են՝ նախագահող Արծրուն Ավագյան, Սամվել Մուրադյան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, պրոֆ Գուրգեն Մելիքյան, Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյան, Լիբանանից ժամանած սիրված ասմունքող, «Արարատ» հանդեսի խմբագիր Անի Եփրեմյան, բանասեր և դերասան Աղասի Թադևոսյան, Երևանի կինոյի և թատրոնի ինստի-

տուտի բեմական խոսքի երկարամյա դասախոս և ճանաչված դերասան Մարինե Մխիթարյան, նախորդ տարիների մրցանակակիր, իրանահայ, այժմ արդեն ինքնուրույն ելույթներով հայտնի Սիփան Սեփանյան, վաստակաշատ մանկավարժներ:

Փառատոնն, ըստ էության, նաև հաճելի ճամփորդություն էր Սևանի ափով, Դադիվանքով ու Քարվաճառով դեպի Ստեփանակերտ ու Շուշի: Այստեղ էլ՝ Խ. Աբովյանի անվան դպրոցի դահլիճում, կայացավ գեղարվեստական բովանդակալից խոսքի յուրօրինակ «ճակատամարտը», ուր հաղթող մրցանակակիրներ կային, բայց պարտվողներ՝ ո՛չ: Պարզապես ստուգվում են պատանիների կարողությունները՝ ով ինչպես է ընկալում մայրենիով (արևելահայերեն կամ արևմտահայերեն) չափածո խոսքի գեղեցկությունը և ինչպե՛ս է հրամցնում դրանք:

Իհարկե, առավել շնորհալիները՝ (ամեն տարիքային խմբից առաջին երեք տեղ գրավածները) դառնում են մրցանակակիրներ, իսկ մյուսները պարգևատրվում են ՀՀ սփյուռքի նախարարության և Արցախի գիտության, կրթության և սպորտի նախարարության, Շուշիի վարչակազմի պատվոգրերով, գրքերով ու հուշանվերերով: Փառատոնի օրերին Արցախի պատմամշակութային հուշարձաններ դիտելը, Շուշիի մշակույթի պալատում եզրափակիչ համերգին առաջին անգամ ներկա գտնվելն ու մասնակցելը հայրենիքից հարյուրավոր կամ հազարավոր կիլոմետրերով հեռու հայ երեխայի համար մի՞թե բախտավորություն կամ իրականացած երազանք չէ:

Երեխայի, մանավանդ սփյուռքահայ երեխայի հայրենասիրությունն սկսվում է նախ հայրենիքը ճանաչելուց: Փառատոնը նրան տալիս է Արցախը և իր սերընդակիցներին ճանաչելու և սիրելու բացառիկ հնարավորությունը: Ազատագրված Արցախում և հայրենի միջավայրում լինելն արդեն սոսկ պատանեկան ռոմանտիկ երազ չէ, այլ հայ զինվորի սխրանքով քաջալերվելու, հայրենասիրական ոգին զորացնելու իրողություն: Իսկ արդեն քառորդ դար ազատագրված Շուշին և կայացած Արցախի պետականությունը նրան ներշնչում են տիրոջ օրինական հպարտություն, հայրենիքի հանդեպ սեր և պարտքի զգացում, ազգային այդ սրբությունները պաշտպանելու գիտակցություն:

Այս սպիսին էր համընդհանուր ոգևորությունը Շուշիի մշակույթի պալատում կայացած եզրափակիչ համերգին

Հայրենիքը և սփյուռքը միավորող, մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը միտված և արդեն ավանդական դարձած այս միջոցառման համազգային նշանակության խոր ըմբռնումով և նրա համապետական ու համազգային կարևորության հստակ գիտակցումով են փառատոնը կազմակերպում ամերիկահայ բարերարները, որոնց եռանդաշատ ու նվիրյալ ներկայացուցիչը իր մարդկային նկարագրով համակրելի Ալեք Բաղդասարյանն է, Հայաստանի Հանրապետության սփյուռքի և Արցախի կրթության,

գիտության և սպորտի նախարարությունները, Երևանի պետական համալսարանը, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Բարեգործներն իրենց միջոցները չեն խնայում, իսկ ՀՀ սփյուռքի նախարարությունն ու Արցախի պետական կառույցների ղեկավարները, ընդհուպ նաև նախագահ Բակո Սահակյանը, կա՛մ անձամբ են ներկա գտնվում փառատոնի աշխատանքներին, կա՛մ իրենց ուղերձներով քաջալերում են մասնակիցներին:

Շուշիի ազատագրման 25-ամյակի նշանավորմանը նվիրված վեցերորդ փառատոն-մրցույթն ուներ իր բովանդակային ուղղվածությունն ու «Մենք կանգուն ենք մեր լեռների պես» կարգախոսը: Այն անցկացվեց հուլիսի 30-ից օգոստոսի 4-ը:

Երկու տարիքային խմբերի մրցանակակիրների թանկարժեք պարգևներն արդիական էին ու գործածելի: Մյուս մասնակիցներն էլ, որպես արցախյան երանելի օրերի թանկ հիշողության վավերացում, ստացան Հայաստանի և Արցախի համապատասխան նախարարությունների պատվոգրեր, գրքեր և հուշանվերներ:

Մասնակիցների հիշողությունից չի ջնջվելու գլխավոր կազմակերպչի՝ ամերիկահայ բարերար Ալեք Բաղդասարյանի խոսքը հայաստանցի և սփյուռքահայ երեխաներին.

- Բարի ճանապա՜րհ բոլորիդ, բարի վերադարձ Արցախ և Շուշի, բարի վերադարձ հայրենիք...

2017 թ. հունվարից ցայսօր ստացված օգնություններ

Հերթ N	*Ամսաթիվ*	*Բարեգործի ազգանուն, անուն*	*Նպատակը*	*Գումար ՀՀ դրամ*
400	20.01.2017	Պողոսյան Աշոտ	Օգնություն Գ. Բ. Անանուն	5000
401	24.01.2017	Gurgen Melikyan multichildren famly foundation of Kashatagh, Glendale	/ Reb/ 19275706//Donation student tuition pop other/ donation	2 431 650 (5 000 $)
402	03.02.2017	Գաբրիելյան Դերենիկ	Օգնություն	10 000
403	06.02.2017	Gurgen Melikyan multichildren famly foundation of Kashatagh, Glendale, CA	/ Reb/ 19275706//Donation student tuition pop other/ donation, student tuition	2 431 650 (5 000 $)
404	14.02.2017	Ասատրյան Բագրատ	Օգնություն	15 000
405	24.02.2017	Մելիքյան Գուրգեն	Tree Project Sarkissian Eva Loutfic	488 000 (1 000 $)
406	24.02.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Kyureghyan Varoojh & Emma	976 000 (2 000 $)
407	24.02.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Kahve Tony S.-	488000 (1 000 $)
408	06.03.2017	1/Cowanskville holdings limited Road taun Tortola 6 /CH/ UBS/ 0206-00161878	/REB/ZD81062T16471059 CHARITY	4 858 463 (9 980 $)
409	20>03>2017	Ֆինանսական համակարգի հաշտարար	Գառնի Ինվեստ ՈՒՎԿ ՓԲԸ-ից նվիրատվություն Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների աջակցություն ծրագրի իրականացման համար	105554
410	4/3/2017	Մելիքյան Գուրգեն	Noune and Nerses Tumanian	145650 (300 $)
411	03.04.2017	Մելիքյան Գուրգեն	Varoujan Sirapian	130500 250 EUR
412	05.04.2017	Ասատրյան Բագրատ	Բազմազավակ ընտանիքների համար կովեր ձեռք բերելու նպատակով	840 000
413	05.04.2017	Gurgen Melikyan multichildren famly foundation of Kashatagh, Glendale,CA	/ Reb/ 19275706//Donation student tuition pop other/ donation	2 420 900 (5000$)
414	14.04.2017	Գալստյան Սարգիս	Օգնություն	135 000
415	21.04.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Բերձորի զոհված զինվորների ընտանիքներին Seda Nikogossian-ի կողմից	103 900
416	21.04.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Բերձորի զոհվածզինվորների ընտանիքներին MR.and MS.Coliness-ի կողմից	103 900

417	21.04.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Բերձորի զոհված զինվորների ընտանիքներին Mr.David and Armine Torunian--ի կողմից	103 900
418	21.04.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Բերձորի զոհված զինվորների ընտանիքներին Ms.Tenny Nigossian-ի կողմից	69 400
419	21.04.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Բերձորի զոհված զինվորների ընտանիքներին Mr.Khoren Mardoyan -ի կողմից	138 700
420	03.05.2017	Gurgen Melikyan multichildren family foundation of Kashatagh, Glendale	/ Reb/ 200305110// Center children meal pop other/ donation	2 423 400 (5 000 $)
421	05.05.2017	Ֆոքքս օն չիլդրեն նատու, ինկ բկ հայաստանյան մասնաճյուղ	Օգնություն	120 000
422	06.05.2017	Մարաշլյան Գևորգ	Օգնություն ծառերի ծրագրին՝ Գևորգ և Վարդիթեր Մարաշյաններ	97200 (200 $)
423	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին մեր սիրելի **Կապտապետ Բերբերյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 28.04.2017	20000
424	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին՝ տաղանդաշատ ընկերոջս՝ **Քաջիկ Միքայելյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի. ապրիլ 2017	20000
425	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին **Լևոն Մակարյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի. 07.02.2017	20000
426	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին հրաշալի հայ մտավորական **Պերճ Ստեփանյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000
427	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին համալսարանական վաղեմի ընկերջս՝ **Ռոմիկ Վանեսյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի. 07.02.2017	20000
428	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին՝ եղբորս բժշկապետ **Սամսոն Մելիք-Իսրայելյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 25.04.2017	20000
429	06.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Ջանիկ Սիրականյանի** հիշատակին ի փոխան ծաղկեպսակի. 24.03.2017	20000
430	12.05.2017	1/Cowanskville holdings limited Road taun Tortola 6 /CH/ UBS/ 0206-00161878	/REB/ZD81062T16471059 CHARITY	4 834 711 (9 980 $)
431	15.05.2017	Ապոշյան Ջորջ / George Aposhian	Donation	968430 (2 000 $)
432	15.05.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Վահե Հենրիկի Սարյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000
433	21.06.2017	Rafik Boroian Hugs bag 17 75440 Uppsala	Օգնություն Քաշաթաղի ԽԵԱ կովերի ծրագրին	466 123 (970 $)
434	28.06.2017	Գալստյան Սարգիս	Օգնություն ծառերի ծրագրին	170 000
435	28.06.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ուսման ծրագրին՝ Ասպետ Աիդա Փոգարյաններից	240 750 (500 $)
436	28.06.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ԽԵԱ ծրագրին՝ Հենրիկ և Անահիտ Շահնազարյաններից (Շվեդիա)	337050 (700 $)
437	04.07.2017	Հարությունյան Սվետլանա	Օգնություն ծառերի ծրագրին Գ.Գ.Անանունի կողմից	19800

438	02.08.2017	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծրագրին՝ Վարուժ և Էմմա Կյուրեղյանների	2 393 050 (5 000 $)
439	03.08.2017	Եփրեմյան Անի	Օգնություն ծառերի ծրագրին՝ Անի Եփրեմյանից և Նորա Դաշչյանից	25 000
440	18.08.2017	Գալստյան Սարգիս	Օգնություն	102 000
441	18.08.2017	Վարդանյան Մարգո	Օգնություն	144 000
442	24.08. 2017	Մելիքյան Գուրգեն Վրեժի	Օգնություն Levon Marashlyan	192200 (400 $)
443	24.08. 2017	Մելիքյան Գուրգեն Վրեժի	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Թերեզա** մայրիկի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի 13.08.2017	20000
444	24.08. 2017	Մելիքյան Գուրգեն Վրեժի	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Թերեզա Օհանյանի** հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի՝ 13.08.2017 թ. Վահագն Մելիքյանի կողմից	20000
445	24.08.2017	Մելիքյան Գուրգեն Վրեժի	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Պերճ Զեյթունցյանի** հիշատակին ի փոխան ծաղկեպսակի,	20000
446	24.08.2017	Մելիքյան Գուրգեն Վրեժի	«Ստեփան Ալաջաջյան» կրթաթոշակ՝ Թերեզա Ալաջաջյանի կողմից	477550 (1000$)
447	30. 08. 2017	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH, GLENDALE	/RFB/209768364//DONATION TREE PLANTING PROJECT POP OTHER/DONATION	*1435950 (3000$)*
448	06. 09. 2017	Տեր-Պողոսյան Հովիկ	Օգնություն կովերի ծրագրին՝ իր տիկնոջ՝ Դիանա Տեր-Պողոսյանի արևշատության համար	335650 (700 $)
449	06. 09. 2017	Տեր-Պողոսյան Հովիկ	Օգնություն կովերի ծրագրին՝ իր հոր՝ **Սուրեն Տեր-Պողոսյանի** հիշատակին	335650 (700 $)
450	06. 09. 2017	Տեր-Պողոսյան Հովիկ	Օգնություն կովերի ծրագրին՝ իր մոր **Հայկանուշ Տեր-Պողոսյանի** հիշատակին	335650 (700 $)
451	23.09.2017	Գույումջյան Կիրակոս	Օգնություն Քաշաթաղի շրջանի Ուռեկան գյուղի դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին	1 437 000 (3 000 $)
452	23.09.2017	Գույումջյան Կիրակոս	Օգնություն Ուռեկանի Ն. Գույումջյանի անվան դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքներին	718 500 ՀՐ (1 500 $)
453	23.09.2017	Պալյան Ռաֆֆի	Օգնություն ծառերի ծրագրին	95 800 (200 $)
454	23.09.2017	Գյուրջյան Ռուբեն	Օգնություն ծառերի ծրագրին	95 800 (200 $)
455	23.09.2017	Բաղալյան Վիգեն	Օգնություն ծառերի ծրագրին	71 850 (150 $)
456	23.09.2017	Բաղալյան Արմեն	Օգնություն ծառերի ծրագրին	71 850 (150 $)
457	23.09.2017	Մարդոյան Խորեն	Օգնություն զոհված զինվորների ընտանիքներին	711 400 (1 500 $)
458	23.09.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Կարեն Փաշայանի** հիշատակին ի փոխան ծաղկեպսակին	20 000
459	23.09.2017	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Քնարիկ Ղոչիկյանի** հիշատակին ի փոխան ծաղկեպսակի	20 000
460	23.09.2017	Հակոբյան Աբրահամ ընտանիք	Օգնություն ծառերի ծրագրին՝ **Վահագն Մահտեսի Հակոբյանցի**	142 000 (300 $)

			անվանապուրակի բարեկարգման համար	
461	25. 09. 2017	Նագգաշյան Անուշ (Երուսաղեմ)	Օգնություն ուսման ծրագրին	40 000

ԽՈՇՈՐ ԵՂԶԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հերթ. N-ը	Ազգանուն, անուն	բնակավայր	Երեխաների թիվը	Կովերի քանակը	բարերարները	Կովի ակ. N-ը
348	Ագախանովա Մարիամ (միայնակ)	ք. Միջնավան	7	2-ական	Հենրիկ և Անահիտ Շահնազարյաններ (Շվեդիա)	5765
349	Ամիրխանյան Վեներա Հայրապետյան Վալերիկ	գ. Գողթանիկ	8	2-ական	Ռաֆֆի և Հասմիկ Բորոյաններ (Շվեդիա)	5971
350	Քյարունց Նորայր Սարգսյան Շուշանիկ	գ. Աղավնո	4	1-ին	Տեր-Պողոսյան Դիանայի արևշատության համար	5912
351	Բաբայան Ոսկի Բաբայան Սեյրան	գ. Հոչանց	5	1-ին	Տեր-Պողոսյան Հայկանուշի հիշատակին	5988
352	Ռասոյան Նարինե (միայնակ)	գ. Աղավնո	4	1-ին	Տեր-Պողոսյան Սուրենի հիշատակին	8321
353	Բաբլոյան Նելլի Պետրոսյան Կարեն	գ. Գանձա	5	1-ին	Albert K. Deurdulian (USA)	5969

Շարունակելի

ԱՉՔՆԵՐԻՍ ԱՌԱՋ ԾՆՎԱԾ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Իրական պատմություն

Բարեգործությունը նախ և առաջ բարի կամքի արտահայտություն է և ծնվում է սրտաբուխ, առանց պարտադրանքի, երբեմն էլ՝ անակնկալ: Նրանք, ովքեր հարստացել են անխիղճ թալանով և սատանայի ճարպկությամբ, բանաստեղծի ասած՝ «մարդապատյան դևեր» են, որոնց մարմնում մարդը և բարությունը հազվադեպ են գիշերել: Աղքատ ժողովրդից ու անորակելի թշնամու դեմ պատերազմող նորանկախ հայրենիքից միլիարդներ կողոպտած արարածները միայն կենսաբանորեն են մարդանման: Մինչդեռ համեստ կարողությունների տեր բարեխիղճ մարդիկ մտածում են նեղության մեջ հայտնված իրենց ազգակիցների մասին՝ նրանց քրիստոնեաբար նվիրաբերելով ինչ որ կարող են:

Բարության վրա է աշխարհը կանգուն, և մարդկային կյանքն՝ իմաստավոր:

... Սեպտեմբերի 25-ին Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ, բանասիրական գիտությունների թեկնածու, սաղիմահայ (երուսաղեմահայ) արդեն հանրաճանաչ բանաստեղծուհի Անուշ Նագգաշյանի հետ հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի աշխատասենյակում էինք: Նախորդ օրը Կոմիտասի անվան կամերային երաժշտական տանը իր՝ նորերս լույս տեսած՝ հայոց ցեղասպանությանը նվիրված «Այդ սերմը ես էի» գրքի շնորհանդեսին, որն իր տեսակի մեջ բացառիկ էր, լեփ-լեցուն դահլիճի անկեղծ մթնոլորտում Հայոց ցեղասպանությանն ականատես տատիկի հուշերի՝ նրա թոռնուհու հաջողված վերապատումի արժանի գնահատությունն էր հայ մտավորականության կողմից:

Բոլոր ելույթներն էին սրտաբուխ: Հուզված հեղինակը շատ էր ոգևորվել թյուրքագետ Ռուբեն Մելքոնյանի ելույթով և հատկապես գիրքը թուրքերեն թարգմանելու նրա առաջարկով: Պայմանավորվեցինք հաջորդ օրը հանդիպել համալսարանում՝ որոշակիացնելու թարգմանության գործընթացը:

Սեպտեմբերի 26-ի առավոտյան՝ մեր պայմանաժամին, Ռ. Մելքոնյանին հանդիպեցի համալսարանի բակում:Նա նոր էր հրամանագրվել արևելագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում և կարևոր գործով ռեկտորատ գնալիս խնդրեց, որ սպասենք իր վերադարձին: Մինչ նրա գալը՝ Անուշը հուզմունքով նայում էր հիմնադրամի՝ իրենց տրամադրած կովերի հետ լուսանկարված Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների լուսանկարները: Գոհունակությամբ էին ժպտերես երեխաներն ու ծնողները նկարվել կովերի հետ:

- Որքա՞ն կարժե Քաշաթաղի մեջ ընտանիք պահող մեկ կովը,- հարցրեց մտազբաղ բանաստեղծուհին՝ հավանաբար խորհելով Արցախում բնակվող մի հայ ընտանիքի երջանկացնելու մասին: Գուցե այլ բան էր խորհում, սակայն ինձ այդպես թվաց:

- 700 ԱՄՆ դոլար,- պատասխանեցի:

- Ափսո՜ս, շա՜տ ափսոս, այս պահուն քովս այդչափ դրամ չունիմ...

Ա. Նագգաշյանը լուսանկարներով էր զբաղված, Գ. Մելիքյանը՝ խնդրարկուների այլևայլ խնդիրներով, կովերի, ծառերի, գրքերի, բազմազավակ ընտանիքներին օգնության հազար ու մի հարցերով: Այդ պահին: Ներս մտավ մի համեստ երիտասարդ և ամաչելով հարցրեց.

- ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժնի առաջին կուրսի ուսանող եմ. ընդունվել էի դպրոցն ավարտելուց հետո և անմիջապես զինվորական ծառայության մեկնել Արցախ, ապրիլյան քառօրյա պատերազմին առաջնագծում եմ եղել: Նոր եմ զորացրվել ու մտել ուսանողական իրավունքներիս մեջ: Իմացել եմ, որ Ձեր հիմնադրամն օգնում է անվճարունակ ուսանողներին: Ձե՞ք ասի՝ ո՛ւմ անունով դիմում գրեմ:

- Երիտասա՛րդ, ցավում եմ, որ ուշ եք եկել, դիմումների ընդունման վերջնաժամկետը սեպտեմբերի 20-ն է, իսկ այսօր՝ 25-ը,- պատասխանեց տնօրենը և շարունակեց:- Այս կիսամյակի համար, ցավոք, ոչինչ անել չենք կարող, որովհետև հոգաբարձուների խորհուրդն արդեն քննել է բոլոր դիմումները և որոշել՝ ում պետք է օգնենք: Թեև ըստ կանոնադրության՝ առաջին կուրսեցիներին չենք օգնում, բայց Դուք դիմում գրեք իմ անունով, երկրորդ կիսամյակից հիմնադրամը Ձեզ կօգնի:

- Բայց ես նոր եմ զորացրվել և ծանոթ չեմ Ձեր կանոնադրությանը. բացառություն չե՞ք անի:

- Բացառություն չէ՞, որ ասում եմ՝ դիմում գրեք:

Այս ընթացքում բանաստեղծուհին պայուսակն էր փորփրում և ինչ-որ բան գտնելով՝ միջամտեց.

- Տղա՛ս, որքա՞ն է ուսմանդ վարձը:

- Ջեղչի դիմում եմ գրել, բայց չգիտեմ՝ որքան են զեղչելու:

- Կը ցավիմ, որ այս պահին քովս 40 000 դրամ ունիմ միայն, այսչափ կրնամ օգնել քեզի, ահա՛, վերցո՛ւր:

- Տիկի՛ն Անուշ,- ընդհատեց Գ. Մելիքյանը,- վարձավճարի գումարը մենք ուսանողի ձեռքը չենք տալիս, այլ բանկի միջոցով փոխանցում ենք համալսարանի հաշվապահություն: Տվե՛ք գումարը:: Թող ճշտվի՝ որքան է գումարը զեղչելուց հետո, մենք, որքան կարող ենք, կավելացնենք, կփոխանցենք և ստացականը կհանձնենք Ձեզ:

Ապա դարձավ ուսանողին.

- Երիտասա՛րդ, Ձեր անուն-ազգանունը:

Երտասարդը, հայտնելով իր տվյալները, զոհունակությամբ հեռացավ. չէր սպասում խնդրի նման բարեհաջող լուծման:

Մենք էլ հիմնադրամի անունից զոհունակություն հայտնեցինք բանաստեղծուհուն, որ հրաժեշտի պահին ասաց.

- Կներեք, այսչափ էր քովիս դրամը: Հոս գալուս նպատակն ուրիշ էր, և ես՝ անպատրաստ: Գալ անգամ Երուսաղեմեն պատրաստված պիտի գամ ...

«Այդ սերմը ես էի» գրքում Ա. Նագգաշյանը իր Աննա տատի պատմածներն է ներկայացրել, թուրք իրավապաշտպան Ֆեթիհյե Չեթինը «Մեծ մայրս» գրքում՝ իր Կատարինե հայ տատի: Թյուրքագետ Ռուբեն Մելքոնյանը, վերջինիս թարգմանիչը լինելով, իրարից անկախ ստեղծված այդ գրքերում նկատել էր բազմաթիվ ընդհանրություններ, որոնք հավաստում են, որ գործել է նույն ցեղասպան թուրք պետական մեքենան: Նա խոստացավ Անուշի գիրքը թուրքերենով հրատարակելուց հետո կազմակերպել ցեղասպանության ականատես հայ տատիկների թոռների՝ Անուշ Նագգաշյանի և Ֆեթիհյե Չեթինի հանդիպում: հանդիպում: Սպասենք....

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» կրկին հայտարարում է մեծ մարդասեր, Լոս Անջելեսի հայ գաղութի համայնքային կյանքի կազմակերպիչներից մեկի՝ «Անահիտ» հիմնադրամի բազմամյա նախագահ

ՆԱԶԵԼԻ
ՉԱՐՉՅԱՆԻ

անվան կրթաթոշակ առաջավոր ուսանողների համար:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ուսանող - ուսանողուհիները, ովքեր ունեն ուսման բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հիմնադրամի հոգաբարձության խորհրդին դիմում են ներկայացնում նրա գործադիր տնօրեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի անունով:

Դիմումները փաստաթղթերի հետ միասին մինչև սեպտեմբերի 20-ը ներկայացնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատ:

* * *

Հոգաբարձությունը կրկին մրցույթ է հայտարարում նաև ականավոր գրող, թարգմանիչ և հանրային գործիչ, §չխոնարհվող եղեգ¦, երջանկահիշատակ

ՄՏԵՓԱՆ
ԱԼԱՋԱՋՅԱՆԻ

անվան կրթաթոշակի համար:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի այն ուսանող-ուսանողուհիները, ովքեր ունեն բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ

Հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը հայտնում է, որ հնարավորություն ունի մասամբ վճարելու հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողների ուսման վարձերը.

- դիրքապահ զինվորների
- սիրիահայ ուսանողների
- Քաշաթաղի շրջանի ուսանողների

- երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ ուսանողներին
- զոհված ազատամարտիկների երեխաների:

Դիմումները մյուս փաստաթղթերի հետ միասին մինչև սեպտեմբերի 20-ը ներկայացնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատ:

* * *

Ելնելով ստեղծված սոցիալական իրավիճակից՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է՝ Միանվագ նյութական օգնություն տրամադրել հայրենական գիտության զարգացման մեջ առանձնակի ավանդ ներդրած մտավորականների ընտանիքներին:

* * *

Շարունակվում է ԽԵԱ Կովերի ծրագիրը:

Հոգաբարձության խորհրդի որոշմամբ՝ կովեր տրվում են Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում բնակվող բազմազավակ ընտանիքներին՝ ըստ երեխաների քանակի.

- 4 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է մեկ կով.
- 6 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է երկրորդ կովը.
- 7 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին տրվում է երրորդ կովը:

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 Թ. ՆՈՐ ԿԱԶՄԸ

Հիմնադրամի գործադիր տնօրեն — **Մելիքյան Գուրգեն**
բան. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան

Հոգաբարձության խորհրդի նախագահ — **Ավագյան Արծրուն**
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան

Հոգաբարձության խորհրդի նախագահի տեղակալ — **Մելիքյան Մերի**

Հոգաբարձության խորհրդի անդամները.

1. Ալաջաջյան Թերեզա- բարերար, ԱՄՆ
2. Ալթիբարմաքյան Հակոբ -բարերար, Ֆրանսիա (Նիցցա)
3. Ալոյան Վազգեն- բարերար, ՀՀ, Ա.Ս.Պ. Դելմար ՍՊԸ տնօրեն
4. Բաշմակյան Հակոբ -բարերար, ԱՄՆ
5. Բորոյան Ռաֆիկ-բարերար, Շվեդիա
6. Գրիգորյան Մարատ-պրոֆեսոր, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
7. Թոնի Շուքրի Կահվե-բարերար, Անգլիա
8. Թորոսյան Ռոստոմ- բարերար, ԱՄՆ
9. Կյուրեղյան Վարուժ- բարերար, ԱՄՆ
10. Հակոբյան Զոյա- բարերար, ՀՀ
11. Հարությունյան Սվետլանա — ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատի ծրագրավորող
12. Միրզոյան Քնարիկ - ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ
13. Մուրադյան Սամվել -բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ
14. Շահնազարյան Հենրիկ - բարերար, Շվեդիա
15. Շմավոնյան Շմավոն - արվեստագետ
16. Ջանգոզյան Վարդան -բարերար, ԱՄՆ
17. Սարաֆյան Մորիս-UCLA-ի ուսանող, ԱՄՆ
18. Սաֆարյան Ալեքսանդր- պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ թյուրքագիտ. ամբիոնի վարիչ
19. Սերայդարյան Վաչե-բարերար, բժշկապետ, ԱՄՆ (Բոստոն)
20. Սիրափյան Վարուժան -բարերար, Ֆրանսիա (Փարիզ)
21. Վանցյան Կարեն- բարերար, Շվեյցարիա
22. Վարդանյան Արմոնդ-բարերար, ԱՄՆ
23. Փափայանց Շիլա -բարերար, ԱՄՆ
24. Քանյան Մերի- բարերար, ԱՄՆ:

ÊØ´²¶ð²Î²¼Ø`
¶խավոր խմբագիր` ê²Øì ºÈØàôð²¸Ú²Ü
µ³Ý. ·Ç. ¹áÏï áñ, å ñáý»ëáñ
²ì²¶Ú²Ü ², µ. ·. ¹., å ñáý»ëáñ

Ø° ÈÆøÚ² Ü ¶ , µ. · . Ã, å ñáý »ëáñ
ê² ü² ðÚ² Ü ² È, å . · . Ã,, å ñáý »ëáñ

Ն յ ն ւ թ ե ր ը ¨ Ó·³ որ ո ւ մ ը ՝ ê. Մ ո ւ ր ա ղ յ ան ի:

î å ³ ù³ Ý³ Ï Á՝ 99:

Â »ñÃÁ µ³ Å³ Ýí áðÙ ¿ ³ Ýí ×³ ñ:

Ê Ù µ³ · ñáõÃÛ³ Ý Ñ³ ëó»Ý՝

Երևան 0025, Աբովյան 52 ², ԵՊՀ Ñ³ Û µ³ Ý³ uի ñáõÃÛ³ Ý ý³ Ï áõÉ »ï ÇÙ³ ëÝ³ ß»Ýù, 215 ë»ÝÛ³ Ï :

Ð»é.ª060 710 629, 055 -52- 29-36,

55 – 25 - 37, 52- 29- 36: